ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/134

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ

Մասնակից՝ «Թագ ՀԷմ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Թագ ՀԷմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Էդ. Թագեսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-20/6» գնանշման հարցում, չափման և հսկողության սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8141-2020 գրությամբ «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 27.05.2020թ.-ի թիվ Մ-1/700-20 գրության հիման վրա, 03.06.2020թ.-ին «Թագ ՀԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 03.06.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/134 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

09.06.2020թ.-ին և 26.06.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.06.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.06.2020թ.-ին:

2. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամը 27.05.2020թ.-ի թիվ Մ-1/700-20 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

««Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Գյումրու մասնաճյուղի կողմից 2020 թվականի մայիսի 14-ին հայտարարված «ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով «Չափման և հսկողության սարքեր» գնման ընթացակարգում հայտ է ներկայացրել «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովը՝ բացման նիստի ընթացքում արձանագրել է, որ «ԹԱԳ ՀԷԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում պահանջվող ապրանքի

անհամապատասխանություն: Մասնակցին տրված մեկ աշխատանքային օրվա ընթացքում արձանագրված անհամապատասխանությունը չի շտկվել:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Թագ ՀԷմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 03.06.2020թ.-ին գրությամբ դիմել է «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8141-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 09.06.2020թ.-ին հրավիրված նիստին:

«Թագ ՀԷմ» ՍՊԸ-ն 10.06.2020թ.-ին ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր կողմից ուղարկված 26/26-1/8141-2020 գրության՝ «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգին, Ձեզ ենք ներկայացնում պարզաբանում՝

1. Ըստ Գնումների օրենքի, մասնակիցը իրավունք ունի պարզաբանման պահաջի հետևաբար պատվիրատուի՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-20/6 ծածկագրով մրցույթի շրջանակներում տրվել է պարզաբանում, ըստ որի, պահանջվող TEMP 3,32 սարքի փոխարեն մասնակիցները կարող են գնային առաջարկ ներկայացնել TEMP 3,31 սարքի համար:

2. Մրցույթի հավելված 1.1-ում տեխնիկական բնութագրի հատվածում մեր կողմից կատարվել է տեխնիկական բնութագրի շտկում համաձայն արտադրող ընկերության "Интерприбор"-ի կողմից մեզ ներկայացրած տեխնիկական անձնագրի, մասնավորապես շտկվել են ջերմային հոսքի խտության չափման հիմնական հարաբերական սխալանքը և ջերմաստիճանի չափման միջակայքը առաջինը 5% ից փոխվել է 6%, իսկ երկրորդը՝ -30 ... +100°C ից՝ -50 ... +150°C:

3. <<ԹԱԳ ՀԷՄ>> ՍՊԸ-ն ստացել էր հայտի շտկման դիմում, սակայն, քանի որ մեր ներկայացրած տեխնիկական բնութագիրը համապատասխանում էր արտադրողի կողմից ստացված տեխնիկական անձնագրի տվյալներին, շտկում չկատարվեց, սակայն պատվիրատուին ուղարկվեց համապատասխան դիմում-պարզաբանում և արտադրող կազմակերպության կողմից տրված սարքի տեխնիկական անձնագիրը: Առանց հաշվի առնելու վերը նշվածը, մեր հայտը մերժվեց:

Կից Ձեզ ենք ներկայացնում հայտարարություն հրավերի պարզաբանման մասին տրված ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-20/6 ծածկագրով մրցույթի շրջանակներում, մեր կողմից ներկայացված հավելված 1.1-ը, արտադրողի կողմից տրված տեխնիկական անձնագիրը, ինչպես նաև տեխնիկական բնութագիրը ներկայացված արտադրողի https://www.interpribor.ru/the-determination-of-heat-flow- temp-3.3 կայքում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/134 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

I. «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից չափման և հսկողության սարքերի ձեռքբերման նպատակով 14.05.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-20/6» գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

II. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքի համար պահանջվել է հետևյալ բնութագրերը՝ «ջերմային հոսքի խտության չափիչ: ТЕМП-3.32: Ջերմային հոսքի խտության չափման միջակայքը 1,0 … 500 Վտ/մ2, ջերմային հոսքի խտության չափման հիմնական հարաբերական սխալանքը՝ 5%, ջերմաստիճանի չափման միջակայքը՝ -30 … +100°C, ջերմաստիճանի չափման հիմնական հարաբերական սխալանքը՝ 0,5°C, ուղիների (կանալների) չափման քանակը՝ 2, Օգտագործվող հզորությունը՝ ոչ ավել 0,05 Վտ: Սարքի գաբարիտային չափերը՝ 145 x70 x25 մմ, Զանգվածը՝ 0,18 կգ: Հանդիսանում է հիմնական միջոց (պահանջվում է երաշխիքային ժամկետ գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված ոչ պակաս 365 օրացուցային օրը:»:

III. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2020թ.-ին որոշմամբ հաստատված հրավերի պարզաբանման համաձայն՝

«Հարցադրում թիվ 1.

«ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին չափաբաժնում նշված է սարքի անվանումը ՋԵՐՄԱՅԻՆ ՀՈՍՔԻ ԽՏՈՒԹՅԱՆ ՉԱՓԻՉ: ТЕМП-3.32, սակայն տեխնիկական բնութագրիը համապատասխանում է ТЕМП-3.31 չափիչին, խնդում ենք տրամադրել պարզաբանում ձեզ անհրաժեշտ է ТЕМП-3.31, թե ТЕМП-3.32:

Պարզաբանում թիվ 1.

Հայտնում եմ Ձեզ, որ 18Т-2К324 «Պահանջվող բնութագրերով տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և իրերի կառուցվածքների, պատրաստման տեխնոլոգիաների մշակում և հետազոտում» գիտական թեմայի շրջանակներում պատվիրված ТЕМП-3.32 ջերմային հոսքի չափման սարքը կարող է փոխարինվել ТЕМП-3.31 սարքով:»:

IV. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ն:

V. Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկել է հետևյալը՝ «ջերմային հոսքի խտության չափիչ: ТЕМП-3.31: Ջերմային հոսքի խտության չափման միջակայքը **10 … 500 Վտ/մ2,** ջերմային հոսքի խտության չափման հիմնական հարաբերական սխալանքը՝ **6%,** ջերմաստիճանի չափման միջակայքը՝ **-50 … +150°C,** ջերմաստիճանի չափման հիմնական հարաբերական սխալանքը՝ 0,5°C, ուղիների (կանալների) չափման քանակը՝ 2, Օգտագործվող հզորությունը՝ ոչ ավել 0,05 Վտ: Սարքի գաբարիտային չափերը՝ **145 x80 x25 մմ,** Զանգվածը՝ **0,3 կգ:** Հանդիսանում է հիմնական միջոց (պահանջվում է երաշխիքային ժամկետ գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված ոչ պակաս 365 օրացուցային օրը:»:

VI. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1.1 հավելվածում «Ջերմային հոսքի խտության չափման միջակայքը «1,0…500Վտ/մ2» փոխարեն ներկայացված է «Ջերմային հոսքի խտության չափման միջակայքը «10…500 Վտ/մ2» պարամետրը, սարքի զանգվածը 0.3կգ է՝ 0.18կգ-ի փոխարեն, «ջերմաստիճանի չափման միջակայքը «-50…+150°C» է՝ «ջերմաստիճանի

չափման միջակայքը «-30...+100°C» փոխարեն, ինչպես նաև հարաբերական սխալմանքը 6% է՝ 5% փոխարեն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել Մասնակցին հստակեցնել իր կողմից առաջարկված սարքի տեխնիկական բնութագրերը:

VII. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 22.05.2020թ.-ին Մասնակցի taggam@mail.ru էլ. փոստի հասցեին ուղարկվել է հայտերի բացման նիստի արձանագրությունը և առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

VIII. Ի պատասխան վերոնշյալ ծանուցման, Մասնակիցը գրությամբ հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից տրված պարզաբանման համաձայն՝ ТЕМП-3.32 ջերմային հոսքի չափման սարքը կարող է փոխարինվել ТЕМП-3.31 սարքով, ուստի «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ն թիվ 1.1 հավելվածով ներկայացրել է ТЕМП-3.31 տեխնիկական բնութագիրը՝ ստացված արտադրողի կողմից:

IX. Հանձնաժողովի 23.05.2020թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ սահմանված ժամկետում «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվեցին հիմնավորումներ իրենց կողմից առաջարկվող սարքի տեխնիկական նկարագրի վերաբերյալ, որոնք համապատասխանում են ТЕМП-3.3 մոդելի տեխնիկական բնութագրին, այն է՝ «Ջերմային հոսքի խտության չափման միջակայքը «10... 500Վտ/մ2», պահանջվող սարքի տեխնիկական նկարագրով անհրաժեշտ միջակայքը՝ «Ջերմային հոսքի խտության չափման միջակայքը «1,0...500Վտ/մ2», «հարաբերական սխալանքը «6%» է, բայց պահանջվող սարքի տեխնիկական նկարագրով անհրաժեշտ է հարաբերական սխալանքը «5%», ինչպես նաև սարքի զանգվածը 0.3կգ է՝ 0.18կգ-ի փոխարեն, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8141-2020 գրությամբ «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում: Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին

հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ մրցույթի դեպքում հարցման և պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին: Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է

մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի կողմից չափման և հսկողության սարքերի ձեռքբերման նպատակով 14.05.2020թ.-ին հայտարարված «ՀԱՊՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-20/6» գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքի համար պահանջվել է հետևյալ բնութագրերը՝ «ջերմային հոսքի խտության չափիչ: ТЕМП-3.32: Ջերմային հոսքի խտության չափման միջակայքը 1,0 … 500 Վտ/մ2, ջերմային հոսքի խտության չափման հիմնական հարաբերական սխալանքը՝ 5%, ջերմաստիճանի չափման միջակայքը՝ -30 … +100°C, ջերմաստիճանի չափման հիմնական հարաբերական սխալանքը՝ 0,5°C, ուղիների (կանալների) չափման քանակը՝ 2, Օգտագործվող հզորությունը՝ ոչ ավել 0,05 Վտ: Սարքի գաբարիտային չափերը՝ 145 x70 x25 մմ, Զանգվածը՝ 0,18 կգ: Հանդիսանում է հիմնական միջոց (պահանջվում է երաշխիքային ժամկետ գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված ոչ պակաս 365 օրացուցային օրը:»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2020թ.-ին որոշմամբ հաստատված հրավերի պարզաբանման համաձայն՝ ТЕМП-3.32 ջերմային հոսքի չափման սարքը կարող է փոխարինվել ТЕМП-3.31 սարքով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ն թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկել է հետևյալը՝ «ջերմային հոսքի խտության չափիչ: ТЕМП-3.31: Ջերմային հոսքի խտության չափման միջակայքը **10 … 500 Վտ/մ2,** ջերմային հոսքի խտության չափման հիմնական հարաբերական սխալանքը՝ **6%,** ջերմաստիճանի չափման միջակայքը՝ **-50 … +150°C,** ջերմաստիճանի չափման հիմնական հարաբերական սխալանքը՝ 0,5°C, ուղիների (կանալների) չափման քանակը՝ 2, Օգտագործվող հզորությունը՝ ոչ ավել 0,05 Վտ: Սարքի գաբարիտային չափերը՝ **145 x80 x25 մմ,** Զանգվածը՝ **0,3 կգ:** Հանդիսանում է հիմնական միջոց (պահանջվում է երաշխիքային ժամկետ գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված ոչ պակաս 365 օրացուցային օրը:»:

Հանձնաժողովի 21.05.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 1.1 հավելվածում «Ջերմային հոսքի խտության չափման միջակայքը «1,0…500Վտ/մ2» փոխարեն ներկայացված է «Ջերմային հոսքի խտության չափման միջակայքը «10…500 Վտ/մ2» պարամետրը, սարքի զանգվածը 0.3կգ է՝ 0.18կգ-ի փոխարեն, «ջերմաստիճանի չափման միջակայքը «-50…+150°C» է՝ «ջերմաստիճանի չափման միջակայքը «-30…+100°C» փոխարեն, ինչպես նաև «հարաբերական սխալմանքը 6% է՝ 5% փոխարեն, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել Մասնակցին հստակեցնել իր կողմից առաջարկված սարքի տեխնիկական բնութագրերը:

Մասնակիցը գրությամբ հայտնել է, որ Հանձնաժողովի կողմից տրված պարզաբանման համաձայն՝ ТЕМП-3.32 ջերմային հոսքի չափման սարքը կարող է փոխարինվել ТЕМП-3.31 սարքով, ուստի «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ն թիվ 1.1 հավելվածով ներկայացրել է ТЕМП-3.31 տեխնիկական բնութագիրը՝ ստացված արտադրողի կողմից:

Հանձնաժողովի 23.05.2020թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը մերժել, քանի որ վերջինիս կողմից ներկայցվեցին հիմնավորումներ առաջարկվող սարքի տեխնիկական նկարագրի վերաբերյալ, որոնք համապատասխանում են ТЕМП-3.3 մոդելի տեխնիկական բնութագրին:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից, դրանց՝ իրավական նորմերի հետ համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ 14.05.2020թ.-ին որոշմամբ հաստատված հրավերի պարզաբանմամբ Հանձնաժողովը հստակ հայտնել է, որ պահանջվող բնութագրերով տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և իրերի կառուցվածքների, պատրաստման տեխնոլոգիաների մշակում և հետազոտում գիտական

թեմայի շրջանակներում պատվիրված ТЕМП-3.32 ջերմային հոսքի չափման սարքը կարող է փոխարինվել ТЕМП-3.31 սարքով, ինչով պայմանավորված «Թագ ՀԷմ» ՍՊԸ-ն թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկել է ջերմային հոսքի խտության չափիչ՝ ТЕМП-3.31 սարքը, որի տեխնիկական բնութագրերը, փաստորեն, ըստ Հանձնաժողովի, տարբերվում են Ընթացակարգի հրավերով սահմանված ТЕМП-3.32 սարքի բնութագրերից, այն դեպքում, երբ հենց նույն Հանձնաժողովն է իր իսկ կողմից տրված պարզաբանմամբ հաստատել, որ վերջինիս համար ընդունելի է նաև ТЕМП-3.31 սարքը, ըստ էության, իր բնութագրով հանդերձ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից չի խախտվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ կարող էր հանգեցնել գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8141-2020 գրությամբ «Թագ Հէմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/134 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**